ԳՈՌ ՍԱՐԳՍՅԱՆ

«ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՉԺՀ «ԽԱՂԱՂ ՀԶՈՐԱՑՄԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՉԺՀ խաղաղ հզորացումը մեծ ազդեցություն է ունենում միջազգային հարաբերությունների ճարտարապետության վրա: Որպես այս քաղաքականության միջոցներից մեկը, հանդես է գալիս «փափուկ ուժի» (soft power) հայեցակարգը:

Այս տերմինի գիտական բացատրությունն առաջին անգամ տվել է ամերիկյան գիտնական Զոզեֆ Նայը, 1990 թվականին[1], սակայն փափուկ ուժի բուն տեսությունը մշակվել է չին մտածողների կողմից (Լաո-Ցզի, Կոնֆուցիոս, Սուն-Ցզի) դեռ մ.թ.ա. և օգտագործվել է չինացիների կողմից /օր. ռազմական մտքի բնագավառում/ ավելի քան երկու հազար տարի:

Ալան Հանտերը առաջարկել է այդ տերմինի բացատրության հետևյալ տարբերակը. «Փափուկ ուժը դա շատ միջոցների, գործիքների և հնարքների ամբողջություն է, որոնց օգնությամբ ազգի մշակութային ռեսուրսները ծնում են ուժեր, որոնք ունակ կլինեն ամրացնելու պետության տնտեսական և ռազմական հզորությունը»:[2]

Գոյություն ունի ազդեցության երեք միջոց. պարտադրանքը (ճիպոտ), պարգևատրումը (անուշաբլիթ) և գրավչությունը, այսինքն «փափուկ ուժ»-ը: Զոզեֆ Նայը նշում է «փափուկ ուժի» երեք բաղադրիչները՝ պետության մշակույթը (որքանով է այն գրավում այլ ազգերին), քաղաքական արժեքները, որին հավատարիմ են նույնիսկ արտասահմանում, օրինական և բարոյական հեղինակության վրա հիմնված արտաքին քաղաքականությունը:[3] Ալան Հանտերը նշում է, որ Չինաստանը առաջիններից մեկն էր, որ օգտագործեց «փափուկ իշխանությունը»: Սուն Ցզիի «Պատերազմի արվեստ» տրակտատում առկա են հետևյալ կանոնները՝ օգտագործիր փափուկ միջոցներ, որպեսզի հաղթես ուժեղին, խուսափիր հակառակորդի ուժեղ կողմերից, օգտագործիր նրա թուլությունները և այլն: Այլ օրինակով, փափուկ ուժի օգտագործումը

[1] Joseph S. Nay. The Changing nature of American Power. Basic Books, 1991, pg: 366
[2] Hunter A. Soft Power and Cultural Influence. The Washington Post. 2005 .pg 97-99
[3] Նույնը

միջին դարերում հանդիսանում էր քաղաքական ուժի տարածում «Կոնֆուցիականության մշակութային տարածաշրջան»-ում՝ Ասիայի երկրներում:

ՉԺՀ «փափուկ ուժի» քաղաքականության վերլուծությունը կարելի է անել նաև վերոնշյալ երեք բաղադրիչներով: Մշակույթի ոլորտում իր նպատակներին հասնելու համար Չինաստանը գործում է մի շարք ուղղություններով՝ ավելացնում է Չինաստանում արտասահմանցի ուսանողների քանակը, հիմնում է Կոնֆուցիոսի ինստիտուտներ, առանձնապես Հարավ-Արևելյան Ասիայում ավելացնում է չինական հեռուստատեսության և ռադիո եթերները, ակտիվորեն զարգացնում է տուրիստական բնագավառը, ավելացնում է սպորտային ոլորտի ծեռքբերումները, շփվում է չինական սփյուռքի (խուացիո) հետ, աջակցում է չինական ավանդական մշակույթի տարածմանը և այլն:

2007 թվականի հոկտեմբերին Չինաստանի կառավարությունը երկրի «փափուկ ուժի» գնահատման համար՝ մշակույթը անվանեց կարևոր գործոն: Նույն տարում ՉԿԿ 17-րդ համագումարում ՉԺՀ նախագահ Հու Ցզինտաոն հայտարարեց, որ մշակույթը դառնում է առավել կարևոր գործոն պետության ամբողջական հզորության գործում: Նա կոչ արեց ավելացնել մշակութային «փափուկ ուժը»: Չինաստանը մեծ նշանակություն է տալիս մշակույթին՝ «մշակութային փափուկ ուժի» հայեցակարգը ներառելով կառավարության ծրագրերում և այն համարելով կարևոր և օժանդակող հենարան դիվանագիտության համար:

Չինաստանի ժողովրդական դիվանագիտության հիմնական նպատակներից մեկը հանդիսանում է Չինաստանի առավել հայտնի դառնալը: Նոր հարյուրամյակում Չինաստանը սկսեց ավանդական մշակույթում դիվանագիտության տեսական հիմքերի որոնումը: 2005 թվականին նախագահ Հու Ցզինտաոն առաջին անգամ առաջ քաշեց «ներդաշնակ աշխարհ» կառուցելու հայեցակարգը: Այժմ մշակութային դիվանագիտությունը դարձավ երրորդ հենարանը՝ քաղաքական և տնտեսական դիվանագիտությունից հետո, այն դարձավ առանձնահատուկ կարևորության դիվանագիտական միջոց:

Չինական գիտական և հասարակական գործիչները, չինովնիկները, ընդգծում են արտասահմանցիների ընդհանուր «աշխարհայացքի ընդլայնման» անհրաժեշտությունը: «Մեր մշակույթը շատ արագ պետք է սկսի ազդեցություն գործել տարբեր երկրներին հատուկ սոցիալական միջավայրերի վրա», «մեզ անհրաժեշտ է հպարտորեն աշխարհին ներկայացնել իսկական չինական մշակութային արժեքները, միաժամանակ ընբռնելով տվյալ գործընթացի նպատակաուղղվածությունը: Ամբողջական և իրական մշակութային ազդեցությունն այնպիսի ուժ է, որը կարող է փոփոխությունների հանգեցնել այլ ժողովուրդ-

ների սովորական ապրելաոճում, փոփոխել հայացքները մարդկության կայացած արժեքների հանդեպ»:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կրթության նախարարությունը հաշվարկել էր, որ 2010 թվականին աշխարհում ավելի քան 100 միլիոն մարդ կուսումնասիրի չիներենը որպես օտար լեզու, որի համար պլանավորվում է առավել ընդլայնել Կոնֆուցիոսի ինստիտուտների ցանցը: Այդ նպատակով ՉԺՀ կառավարությունը պատրաստ է հատկացնել միլիարդավոր միջոցներ:

Կոնֆուցիոսի ինստիտուտներին զուգահեռ, որոնք պետք է իրականացնեն Չինաստանի մասին գիտելիքների տարածման ամենակարևոր գործընթացը, ոչ պակաս կարևորություն է տրվում նաև այլ միջոցներին: Օրինակ, այսօր շատ երկրներում տարածված է արևելյան արվեստը, այդ թվում և չինականը, որ կարող է ծառայել որպես արդյունավետ միջոց՝ ինչպես հին Չինաստանի, այնպես էլ ժամանակակից Չինաստանի կյանքի և կենցաղի տարածմանը: Չինաստանում շատ մասնագետներ համարում են, որ անցյալ դարի վերջերին չինական մշակույթի «մարկերի» դերը իրականացնում էին արվեստի բավականին առանձնահատուկ տեսակները, ինչպիսիք էին ուշուն, Պեկինյան օպերան, կինոն, գրականությունը և այլն, որոնցում Չինաստանը ներկայացված էր որպես կիսաֆեոդալական, կիսագաղութատիրական երկիր և դրանց միջոցով «արևմտյան գիտակցության» մեջ առաջ եկան և շարունակում են պահպանվել նման պատկերացումները: Այսօր, չինացի հեղինակների կարծիքով, իրավիճակը պահանջում է որոշակի շտկումներ կատարել «փափուկ» պրոպագանդայում՝ ուղղված Չինաստանի ժամանակակից ձեռքբերումների տարածմանը, ՉԺՀ ներքին և արտաքին քաղաքականության հանդեպ դրական գնահատականի ձևավորմանը: Համարվում է, որ չինական մշակույթի ընդհանուր տարածման գործում իրենց ներդրումը պետք է ունենան նաև հենց չինացիները, որոնք աշխատում և ապրում են արտասահմանում: Պակաս կարևորություն չի տրվում նաև արտասահմանյան երկրներում չինական քաղամասերի, ռեստորանների, սալոնների և այլ հասարակական օբյեկտների ձևավորմանը, որոնք նույնպես կարող են հանդես գալ որպես «հին և ժամանակակից Չինաստանի դեմք», և իրենց դրական ազդեցությունն ունենալ ՉԺՀ-ի հանդեպ արտասահմանցիների պատկերացումների ձևավորման վրա:

Չինաստանի ժամանակակից քաղաքական արժեքները կոնֆուցիականության, դաոսիզմի, բուդդիզմի և մարքսիզմի համադրություն են: Չնայած, որ Չինաստանն իր էությամբ շարունակում է մնալ ավտորիտար պետություն՝ նրա զարգացման տնտեսական ցուցանիշները և կայուն քաղաքական համակարգը զարգացող երկրների աչքերում հանդիսանում են բավականին արժեքավոր:

ԱՄՆ իմիջի անընդհատ վատացման ֆոնի վրա՝ ՉԺՀ-ն բավարար ուժեր է ներդնում որպեսզի ամրապնդվի ոչ միայն միջկառավարական շփման մակարդակում, այլև ձեռք բերի սովորական քաղաքացիների համակրանքը: Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի երկրներից շատերում «Պեկինյան կոնցենսուսը» առավել ընդունված է, քան «Վաշինգտոնյան կոնցենսուսը»: Նոր դիվանագիտությունը նույնպես էական ներդրում է ունենում համաշխարհային արենայում ՉԺՀ դերի ամրապնդման գործում: Սակայն քաղաքական արժեքների գրավչությամբ՝ Չինաստանը դեռ բավականին զիջում է ԱՄՆ-ին:

Ինչ վերաբերում է աշխարհում օրինական լիդերությանը, ապա Չինաստանը դեռ ընդունվում է որպես տարածաշրջանային գերտերություն՝ առավել գլոբալ հավակնություններով:

Չինացի քաղաքագետները հասկանում են այս տեսության ամբողջ կարևորությունը: «Փափուկ ուժի ակտիվացումը դա ռազմավարական ընտրություն է, որը չի կարելի անտեսել՝ Չինաստանի խաղաղ հզորացման գործում», - կարծում է չինացի քաղաքագետ Չժեն Բիցզյանը: Ցիտելով Ցզյան Ցզեմինին, նա գրում է. «Ժամանակակից աշխարհում պետությունների միջև հզորության մրցապայքարը իր մեջ ներառում է ոչ միայն տնտեսական, գիտատեխնիկական, այլև մշակութային մրցակցություն»:[4]

---

[4] Zheng Bijian. A New Path for China's Peaceful Rise and the Future of Asia. Speech at the Luncheon by the National Committee on American Foreign Policy. 2005.